## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,094456283

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » նոյեմբերի 2021 թվականի N 18-Ա

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021թ. դեկտեմբերի 5-ի կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրություններին անցկացման համար Լոռու մարզի Քարաբերդ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել համայնքի սեփական առանձնատուն ( հասցե՝ 1 փողոց 11 փակուղի տուն 2) :
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

Համայնքի ղեկավար՝ Յուրիկ. Շավելյան

18 նոյեմբերի 2021թ.
Գ. Քարաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,094456283

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18 նոյեմբերի 2021 թվականի N 19 Ա

### ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

Որոշում եմ.

Տեղական ինքնակառավարման մարմինների 2021թ. դեկտեմբերի 5-ի կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղը՝

1) Համայնքապետարանի ակումբ-տնակ (հասցեն՝ գ.Քարաբերդ, փողոց 1, տնակ 32) :

Համայնքի ղեկավար Յուրիկ. Շավելյան

18 նոյեմբերի 2021թ.
Գ. Քարաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,094456283

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 18 » հոկտեմբերի 2021թ. թվականի N 20

### *ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. թիվ 2387 որոշումը:

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Քարաբերդ համայնքի վարչական տարածքում 06-108-005-004 ծածկագրի տակ գտնվող 0.0605 մ/քառ տուն-տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե 1 փողոց տուն 63:

Համայնքի ղեկավար Յուրիկ. Շավելյան

18 հոկտեմբերի 2021թ
գ. Քարաբերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,094456283

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 18 » հոկտեմբերի 2021 թվականի N 21

### ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.09.2021Թ. ԹԻՎ 8 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ուժը կորցրած ճանաչել Քարաբերդ համայնքի ավագանու 25.09.2021թ. թիվ 8 որոշումը:

Համայնքի ղեկավար Յուրիկ. Շավելյան

18 հոկտեմբերի 2021թ.
Գ. Քարաբերդ